

ՀԱՅԲ

ՀԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAİK

AN ARMENIAN JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D. 202 West, 23rd St., New York, N. Y. Vol. VI, 1896.

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Խմբագրական նշմարք.— 1895-1896 Ա. լա՛ղ.— Նամակ Ձէյթունէն.— Նամակք Կ. Գոլսէ.— Նամակք Հայաքնակ գաւառներէ.— Այս թերթի յաջողութեան գաղտնիքն.— Նոր հրատարակութիւններ.— Ձէյթունի մասին հետադրաւորներ.— Այլևայլք:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՇՄԱՐՔ

ԱՄԵՆ. Ս. ԻԶՄԻՐԼԵԱՆ Հայրն պատրիարքական ներկայ ամենածանր պատասխանատուութիւններն կրելու կարող անձնաւորութիւնն է, հեռախոհ, արի և հաստատակամ, առանց ծայրայեղ և յախուռն յանդգնութեան, առանց տարապարտ գրգռողութեան և գոռոզողութեան: Ուրախ ենք որ զինքն պաշտօնանկ անելու դաւադիրներն վրիպեցան: Անհուն աղէտից մէջ ընկղմած Ազգին մեծագոյն մխիթարութիւնն է Նա, և փափաքելի է որ մնայ ի գահուն և շարունակէ նահատակ ժողովրդի իրաւունքն աննկուն և անվեհեր արութեամբ ջատագովել: Այս բոլոր արհաւիրքէն յետոյ Դրան հետ հաշտուելու

փորձն, զոր ոմանք մտածեր են, ինքնամատնութեան տխմար փորձ կը լինի:

Ձէթունն է այն լուսաւոր կետն Հայաստանի դէպ ուր դարձած է ամբողջ ազգին յուսափայլ ակնարկն: Թէ ի՞նչ պիտի լինի քաջաց գաւառին այս շահատակութեան ելքն, այն յայտնի է, բայց եղածն իսկ Հայութեան վշտահար սրտին մեծ սփոփանք է: Ամեն ուրիշ տեղ Ռահմետական ցեղերն միացած ջարդ ու փշուր արին Հայ ժողովուրդն, ու միայն Ձէյթունի գաւառն եղաւ ուր Հայք ջարդ ու փշուր արին ոչ զթուրք խուժանն՝ այլ կանոնաւոր զօրքն ու աւին ամբողջ, թընդանթներն և 1,500 հրացաններն հանդերձ ռազմամթերօք: Մեր Ռուբինեան զօրութեան նշոյլն է որ անշէջ կը մնայ ի Ձէյթուն: Երանի՛ թէ դրամի, խորհրդի և առաջնորդութեան իւղն առատօրէն մատակարարուէր այդ պլպլացող փառացն Հայութեան, որպէս զի չէիջանի, այլ աճելով աճի և նորոգեալ Հայ ինքնօրինութեան մի սկիզբն լինի: Քանի որ Մեծ Հայք այնքան ամայացաւ և Ռուսիոյ կրքուելու վճիռն պիտի ընդունի, Հայ ազգութեան խորիւսին ի կիլիկիա պէտք է փնտռել և ամրացունել:

ԶԷՅԹՈՒՆԻ շարժման ի՞նչ ուղղութիւն պէտք է տալ, ահա փափուկ և կենսական խնդիր: Հոկտ. 18 ին Զէյթունցիք գերի առին թուրք զօրքն և գրաւեցին ամրոցներն: Սուլթանն կը կարծէր թէ երկու շաբաթուան մէջ կրնար ջախջախել Զէյթուն և բնաջինջ ածել: Երկու ամիս ու կէս է որ վայրապար կ'աշխատի: Նոյն ու կէս է որ կարծէին թէ թուրքք չուտով քակ ու քանդ կ'անեն քաջաց գաւառն: Մեք սկիզբէն ասինք թէ դժուար պիտի լինի թրքաց հուն ելնել Զէյթունի հետ, մանաւանդ այս տարի երբ այլ և այլ կողմեր ապստամբութիւններ չեն թողուր որ ահագին բանակ համախմբուի Զէյթունի դէմ:

Խնդիրն այն է այժմ թէ Զէյթուն լաւ կանէ՞ գէնքն վար դնելով, որպէս Հալէպի եւրոպական հիւպատոսք պիտի առաջարկեն: Այդ հարցի պատասխանելու համար հարկաւոր տուեալք կը պակսին մեզ: Գիտենք Զէյթունի դիրքն և Զէյթունցւոց քաջութիւնն, բայց չգիտենք, և գուցէ Պատրիարք Հայրն իսկ լիովին տեղեակ չէ թէ մերայինք քնաի հազար են, այսինքն գէնք կրողներն, որքան ռազմամթերք և պաշար ունին, թէ արդեօք կա՞յ նոցա ռազմագէտ առաջնորդ, կա՞յ ուժանակ, կա՞յ վառօդ շինելու դիւրութիւն, ևն: Թրքաց պաշտօնական հեռագիրն 15,000 Հայ և 10,000 թուրք կը դնէ իրարու դէմ: Այդ յայտնի սուտ է: Կիներն ու տղայք հաշուէ դուրս ձգելով՝ բուն մարտիկներն հաւանականօրէն աւելի չեն քան 6,000: Սուլթանն համիտ դեսպանաց միջնորդութեան առաջարկին պատասխանելու համար երեք օր պայմանաժամ խնդրեց, և այդ միջոցին նա անշուշտ հեռագրաւ ջանաց որքան կարելի է ճշգիւ իմանալ Զէյթունի դէմ մարտնչող բանակին հրամանատարէն թէ՛ Հայոց թէ՛ թրքաց ուժերու վիճակն: Այնուհետև հաւանեցաւ, Յայտնի է թէ Համիտ բնաւ չպիտի ընդունէր եւրոպացւոց միջնորդութիւնն եթէ իրեն հազարդուած տեղեկութիւններն քաջալերական լինէին, և պիտի ուզէր Զէյթունցւոց անօրինակ քաջութեան և յաղթութեան վրէժն իսկոյն լուծել քայքայելով ամեն ինչ:

Կարծեմք թէ Պատրիարքարանն ալ իւր մէկ բանիւրուն ներկայացուցիչն պէտք է ունենայ ի Զէյթուն երբ հիւպատոսք երթան հաշտութեան համար, կամ, ըստ

հեռագրական բացատրութեան, անձնատուր անելու համար Զէյթունցիներն: Մեր կողմանէ ողբալի սխալ մի կը լինի եթէ առանց հարկաւոր երաշխեաց Զէյթուն դադարի դիմադրելէ, և գէնքերն առնուին իրմէ, և նորէն թուրք զօրք հաստատուին Զէյթունի ամրոցներում: Թուրքքն կրնայ շատ բան խոստանալ. Եւրոպացւոց թէ չպիտի ֆնստէ Զէյթունցւոց, բայց յետին ապշութիւն կը լինի հաւատ ընծայել այդ ստապատի խոստմանց: Եթէ եւրոպացիք այդ տեսակ միջնորդութիւն անել կ'ուզեն, թող իրենց շնորհքն իրենց պահեն, այդ կարգի միջնորդութիւններով մեր ազգ փճացուցին արդէն, թող Զէյթուն ալ մինչև վերջ մարտնչելով փճանայ:

Զէյթունցիք պէտք է պահեն իրենց գէնքն, և բոլոր գաւառին համար հայ դայմագամ կարգուի, թուրք ոչ զօրք ոչ թնդանօթ միայն հսկելու, և Հայք վճարեն որոշ սուրք մի Դրան: Եթէ զայդ կամ նման կարգադրութիւն մի անել չեն կրնար, թող Տէրութիւնք մէջ չմտնեն: Բայց եթէ Հայերն խաբելու համար պիտի միջամտեն, ան ուրիշ խնդիր է:

Թուրք կառավարութիւնն ամենապոգալի լրրութեամբ կը շարունակէ իւր պաշտօնական անգրաւ ստախոսութիւններ, մերթ գեւրոպա խաբելու համար և աւելի յաճախ գիւր իսկ հպատակներ, և մանաւանդ իւր հպատակաց տխմարագոյն դասն, այսինքն զթուրքս: Ժամանակին լուրեր տարածեց թէ այլ և այլ քաղաքներու մէջ Հայք յարձակած են միւսլիմ երկրպագուներուն վերայ ի մզկիթս և կոտորածոց սեղի սուած: Եւրոպական հիւպատոսք պաշտօնապէս հերքեցին Դրան այս զրպարտութիւններն, բայց մահմետականք մնացին հարկաւ անիրազեկ զի թուրք լրագրութիւնն այժմ Սուլթանին վերին տեսչութեան ներքե և է:

Այժմ ուրիշ կարգ մի ստախոսութեանց եղանակն սկսած է: Ո՞չ ապաքէն Մահմետականք լսած կը լինին թէ յԱրաբիա, ի Սիւրիա, ի Կիլիկիա ապստամբութիւններ են եղած և զօրք յղուած է ընկ-

ձեռն աղբյուրները: Որպէս զի մահ-
մեռականաց հպարտ հաւատքն չխախտի
ուէ անախորժ լրով և զինուորութենէ
չխրտչին, Դուռն զրոյց հեռագրեց թէ
Ձէյթուն պիտի ումբակոծուի, ումբակոծ-
ուած է, առնուած է և 2,500 Հայք ինկած
են ի մարտին, միայն 250 թուրք, և զար-
հուրեալ ապստամբներն փախեր են լեռ-
ներըն:

Նոյն միջոցին պաշտօնական լուր մ'ևս
հեռագրուեցաւ թէ Տիւրքիներու դէմ յղ-
ուած զօրքն ալ փայլուն յաջողութիւն են
ունեցեր, 12 հազար Տիւրքի սպաննուած
են և միայն 70 թուրք:

Դուռն ուրեմն մեթոս ունի իւր ան-
հաշիւ ստայողութեանց մէջ: Ուր որ
թուրքք ինկած են անգէն և խաղաղ քը-
րիստոնէից վերայ խաբէութեամբ, այն
տեղերու համար կ'ասէ թէ Հայք գրգռե-
ցին զմիւսլիմանն. իսկ այն տեղեր ուր
Հայք զէն ի ձեռին կը գոռան և կը զար-
հուրեցնեն թուրք զօրքն, գուցէ և մեծ
ջարդ կուտան, այն տեղերու համար լուր
կը հանէ թէ օսմանեան բանակն սաստիկ
ջարդ տուած է կեաւուրներուն և յաղ-
թահարած է:

ԱՄԵՐԻԿԱ կամաց կամաց թուրքիոյ
դէմ ելնելու կը միտի: Խարբերդի և Մա-
րաշի մէջ ամերիկեան ստացուածոց, որք
խուժանին ձեռքով աւարի կամ հրոյ զոհ
եղան, փոխարինութիւնն կը պահանջէ
Դուռն: Ամերիկացիք արդէն ծովապետ
մ'ունին երեք ռազմանաւերով ի թրքա-
կան ջրերն, և այժմ Յունուար 4, կը սը-
րեն Ուօշինկթընէն թէ ծովապետ Պընսի
ևս ունի կնքեալ հրաման որոյ համեմատ
դէպ ի թուրքիա թերեւս պիտի երթայ
Դրան դէմ մեծագոյն ուժով գործելու
համար:

Ամերիկա բնակող մեր հայրենակիցնե-
րէն կը խնդրուի որ եթէ գիտեն թէ
թուրքիոյ մէջ սպաննուած է Ամերիկայի
հպատակ եղող ու է Հայ, Նիւ Եորքի Հա-
յոց Ազգային Յանձնախմբին անդամներէն

Rev. Jonh B. Haygooniի ստոյգ տեղեկո-
թիւն տան: Հասցէն է 275 West End Ave.

Շնորհակալ ենք մեր այն բաժանորդ-
ներէն որք արդէն նորոգած են իրենց բա-
ժանորդագրութիւն 1896ին համար: Մաս-
նաւորապէս կը գնահատենք ընդ փոյթ
չարժողներուն ընթացքն:

Անոնք որ անհոգ կամ դանդաղ կը
մնան, պարտին չմեղադրել զմեզ եթէ
դադրեցնենք ՀԱՅՔ ղրկել իրենց յաջորդ
թիւէն սկսեալ, վասն զի բաւական չա-
րաթներէ ի վեր նոր տարւոյս բաժանորդ-
ագրութիւնն բացուած հրատարակած և
լիուլի ժամանակ տուած ենք:

1895-1896

Ա Ի ԱՂ

Ի՛նչ յոյսերով մտանք 1895 տարին և
ի՛նչ ահագին յուսախաբութեամբ աւար-
տեցինք զայն: Սասունի կոտորածն պարզ
յառաջաբանի ձեւ առաւ այն զարհուրելի
ջարդերուն սկիզբն որոց ենթարկեցաւ բո-
վանդակ Հայաստան 1895ին: Առ նուազն
75 հազար հայեր ջարդուեցան երկու ամ-
սուան մէջ, և իրրեւ հետեանք ահաւոր
չքաւորութեան և անպաստապարութեան՝
կրնայ կորուստի գումարն հասնիլ ցդա-
րուն 300,000ի: Իսկ անդրազոյն հետե-
ութեանց հաշուով՝ հարկ է առ նուազն
երկու միլիոն դնել մեր կորուստ, քանզի
մեռցուածներն ընդհանրապէս երիտա-
սարդներ ու այր մարդիկ էին, այնպէս
որ հայ ծննդոց և մահերու կշիռն խան-
գարուած պիտի մնայ 25-30 տարի և մեր
ցեղն շարունակ պիտի նուազի առ ժամա-
նակ մի:

Այսօր մէկ միլիոն մայրեր, քոյրեր,
կին ամուսիններ և որբեր կուլան իրենց

սիրելեաց մահն, և շատեր զուրկ լինելով յարկէ մի ուր ողբային ապահով, բարբարական են անտառոց և լեռներու մէջ: Իւզայս անբաւ ողբն արիւնաթաթաւ Հայաստանի կը լսէ ու չի լսեր Եւրոպա, յառաջ կուգայ վիթխարի գրահաւորաց ահարկու զօրութեան երեւոյթով և կը սպասէ իբրեւ անկար ստուեր՝ չգօրելով գէթ իբրեւ խրտուիլակ ծառայել ընդդէմ այն ձիւաղին որ Պոսֆորի ափանց վերայ կեցած՝ կը խմէ անյագ զարիւն բիւրաւոր անմեղաց:

Աւա՛ղ, այլ ևս հազիւ կ'իշխենք անգութ կոչել զՀամիտ կամ անսուրբ զՄահմետական կրօն, երբ քրիստոնեայ կայսրներ վայրենի պաղարիւնութեամբ ի գնին կան ու միան միլիոնաւոր քրիստոնէից զժոխքմբեր տանջանացն, հազարներու նահատակութեանն, կոյսերու պղծմանն և տաճարաց ապականութեան...

Աւա՛ղ, մեր կորուստն լոկ ստացուածոց բոլորական չքացումն և անհամար կենաց զրաւումն չէ: Ուրիշ կսկիծներ ալ ունինք, բարոյակա՛ն կսկիծներ: Ռուսիայէն, Անգլիայէն, Ֆրանսայէն օգնութիւն կը յուսայինք, և կը կարծէինք թէ այդ մեծ ազգեր պիտի գթային ու թեւարկու լինէին մեզ վեհանձնօրէն, թէ չպիտի կրնային հանդուրժել որ Հայք, իբրեւ մարդկութեան անդամներ, այնպիսի պիղծ և պաշտօնական ոճրագործութեան մի զոհ երթային, ամբողջ դաւառներ հրոյ ճարակ տրուէին և միլիոն մի ժողովուրդ մոխրի վերայ նստէր լալ անմիտութեամբ:

Աւա՛ղ, մեծ է մեր բարոյական կորուստ, զի կորուսինք մեր համարումն և մեծարանաց զգացումն առ մեծամեծ ազգերն: «Մեծ» կոչուածներն իրենց խղճաւի բարոյական պղտիկութեան մէջ երեցան: Պատմութիւնն խայտառակ պիտի աւնէ զիրենք, իսկ զՀայաստան պիտի ներկայացունէ արիւնաթաթաւ բայց մարտիրոսութեան լուսեղէն պսակն կրելով ի գլուխ:

Հայե՛ր, երբայնե՛ր, վեր առէք ձեր վիրաւոր գլուխ և զգացէք թէ դուք, այդ ձեր ոտնակոխ դիրքի մէջ, աւելի մեծ էք և պատուաւոր քան զկեղծ մենծերն: Դուք աւելի հզօր էք ձեր հաւատով քան զհզօր կարծուած փրփրոտոյց իշխաններն որք ձեռքեր ծալած դիտեցին ու կը դիտեն ոճիրներու քան զամենայն լայնածաւալն ու խժդժականն:

ՆԱՄԱԿ ՁԵՑԹՈՒՆԷՆ

Թէ իմչպէս առի՞մ Ձէյթունցիք

Թրքաց ամրութիւններո

Ձէյթունէն հայ քահանայ մի գրած է հետեւեալ նամակն Հոկտ. 21ին, 1895:

Ամսոյս 15ին, կիրակի օրն, զօրքերն ու պաշտպօղութենքն, իբր 500 հոգի, զարկին զԱլլապաշ, գհայ գիւղն, և կռիւն տեւեց չորս ժամ բազում արիւնհեղութեամբ: Հետեւեալ օրն մեք ալ Ձէյթունի ամրոցներն պաշարեցինք, և կռուի առ կռուի կռուելէ զկնի որ անդադար տեւեց վաթսուս ժամ, ցայգ և ցերեկ, և ի հեճուկս թնդանօթոց և արիւնհեղութեան, պահապան զօրքն անձնատուր եղաւ (Հոկտ. 18 կէս օրն վեց ժամ անցած) հանդերձ ռազմամթերօք: Այսօր բանտարկելոյ մի քանին ուղարկեցինք:

Այս պահուս կառավարութիւնն կանոնաւոր և անկանոն զօրաց մեծ բանակ մի կը կուտէ, որ կ'աճի օր քան զօր: Ծալիմի ափանց վերայ կը ժողովին նոքա, Ձէյթունէն չորս ժամ հեռու: Յայտնի է թէ Սասունի արհաւիրքն կրկնելու կը պատրաստուին: Ամեն ժամ, ամեն վայրկեան Հայեր կը հասնին հոս սիրտ ի թունդ և կոտորածոց լուրեր բերելով: Մեր քաջներն ոճրագործ Ձէրքէզներուն, զօրաց և Թրքերուն դէմ ցայգ և ցերեկ գէն ի ձեռին կը կռուին վազելով այսօր ու անդր լեռներուն մէջ՝ օգնելու համար հարստահարելոց:

Հաւանական է որ այսօր կամ վաղիւ մեծ մարտ մի տեղի պիտի ունենայ որով պիտի մասնակցին բուն Ձէյթունի և շըրջակայ գիւղերու հայ բնակիչք:

(ՍԸՆ)

Ամերիկայի Հայոց կողմէ Թուրքիա յղուած չէքեր ետ եկած են պանքաներուն: Ասկէ կը հետեւի թէ նամակներն բացուած են բայց չէքերէն օգտելու գիւրութիւն չունենալով՝ ետ յղուած են: Ի՞նչ փնտռելու համար բացած են նամակներն, և ո՞յք են բացողներն...

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

(Մեր յատուկ թղթակցէմ)

Կ. Պոլիս, Դեկտ. 2, 1895

Թուրք կառավարութիւնն ամեն միջոց կը գործածէ Հայերն յանցաւարտ դատելու համար Եւրոպիոյ առջեւ. թուեմք իւր աղոտ մեքենայութեանց գլխաւորներն: Ա. Փոքր Ասիոյ մի քանի գիւղաքաղաքաց քանի մը Յոյներու ստորագրել տուած է ընդդէմ Հայոցս դժգոհութեան թղթեր, իբր խառնակիչք են: Յունաց թրքամոլ պատրիարքն պատրաստուած էր առ այդ բողոքել Բ. Դրան, սակայն Խառն ժողովոյ լուսամիտ անգամք կռահելով մեքենայութիւնն յետս կեցուցած են զայն: Բ. Մի քանի այլ քաղաքներն, որպէս Գոնիա և Կեսարիա որոց Յոյն հասարակութիւնն ալ ջարդի և աւարի զոհեր տուած է, կառավարութիւնն մի քանի սրիկայ և վարձեալ Յոյներու ստորագրել տուած է թղթեր, որով կը բողոքեն թէ՛ Հայք ըսկած են ջարդն և պատասխանատու են, այդ բողոքներ ևս առաջիններու ելքն ունեցած են: Գ. Թուրքերն Յոյներու համակրութիւնն վաստակելու և ընդդէմ Հայոց գրգռելու համար, կը խոստանան նոցա հատուցանել նոցա բոլոր վնասներն, որպէս պիտի հատուցանեն օտարահպատակաց: Դ. Հայաստանի ինչ ինչ գիւղաքաղաքաց և գիւղերու, մի քանի խեղճ Հայերու բռնի ստորագրել կուտան կառավարութենէն գոհունակութեան և իրենց արեւակիցներու յեղափոխական շարժմանց դէմ դժգոհութեան թղթեր, զորս կը տեսնէք հրատարակեալ թերթերու մէջ: Ե. Ստիպեն Հայ թերթերն ոչ միայն հրատարակել վերոյիշեալ թղթերու պատճէններն, այլ և կառավարութեան կողմանէ պատրաստուած յօդուածներ, նամակներ որով Հայոց Պատրիարքն և Կաթողիկոսն կը համարին իբր շարժառիթ ամեն շարեաց և պետք յեղափոխական շարժմանց են. որպէս Լեւոն Սիւլեանի նամակն զոր Հրատարակելու համար «Հայրենիք» կամաւ դադարեցաւ երկու օր: Զ. Կառավարութիւնն կ'ստիպէ նաև Հայ թերթերն որպէս զի խմբագրականներով համագին ժողովուրդն, թէ կոտորածներու

գրգռիչներն Հայ յեղափոխական շարժումներն են, թէ՛ Հայ յեղափոխականաց պետերն են Հայոց Կաթողիկոսն և Կ. Պոլսոյ Պատրիարքն, թէ՛ գաւառաց մէջ հանդարտութիւն կը տիրէ ևն: Թերթերն նախախապատիւ համարեցան դադարիլ քան հրատարակել, մէկ օր միայն Հրատարակուեցան (նոյ. 14ին), յաջորդ օրն բռնի հրատարակել տուաւ Նազըմ Նուազեցն. լով իւր պահանջներն: Է. Կառավարութիւնն յաջողած է շատ մը եւրոպական լրագրաց թղթակիցներ վարձել, այլ ի զուր, զի գաւառներէն հիւպատոսաց զրկած տեղեկագրերն ճշմարտութիւնն երեւան կը հանեն: Զայնս ևս վարձել կ'աշխատին: Ը. Կառավարութիւնն ամեն միջոցներով կ'աշխատի որ պատրիարք Հայրեն կոնդակաւ մը ժողովուրդեան հանդարտութիւն քարոզէ, որպէս զի կարենայ ըսել թէ՛ «յեղափոխական ժողովուրդն իւր պետին կոնդակաւ միայն հանդարտեցաւ» և այսպիսով Եւրոպիոյ փաստ մի տայ թէ Հայք են այս ամենուն պատճառն ևն: Առ այս Թուրքիոյ կառավարութեան կ'աջակցի և Ռուսիոյ կառավարութիւնն: Մեր երկրորդ Պատրիարքն կը դրժէ և անշուշտ միշտ պիտի դրժէ:

Կոտորածի նամակներն սկսած են հասնիլ ամեն կողմանէ, ամեն թղթաբեր կը յուզէ Պոլսոյ գաւառացի թէ բնիկ Հայութիւնն, Պոլսոյ Հայն սուգի մէջ է:

Գրեցի կարծեմ թէ Թուրք կառավարութիւնն Պոլսոյ բոլոր Հայոց տուններն գրել և նշանակել տուաւ: Նշանակուեցան նաև այն տուններն ուր Հայք ընդ այլ քերիստոնեայս բնակին: Ժողովուրդն ահ ուղողի մէջ ինկաւ, կարծելով զայս Հայոց բնակարանաց վրայ յարձակելու մի կանխանշան: Անգլիոյ դեսպանն բողոքեց, կառավարութիւնն ուրացաւ, և Բերայի կառավարիչն պաշտօնանկ ըրաւ: Սակայն նա յաջորդ օրն կայսերական հրամանաւ թղթատարութեանց ահուռ կարգուեցաւ: Հաստատուեցաւ թէ ամեն ուրեք կայսերական հրամանաւ տեղի ունեցած են:

Թուրք ազատականաց թիւն կ'ըստուարանայ, այժմ երկու գոմիթէ ունին աստ, որոց մին միայն սահմանադրութեան հրատարակումն և երեսփոխանական ժողովոյ բացումն կը պահանջէ, իսկ միւսն աւելի արմատական է և Սուլթանի գահ-

ընկէցութիւնն առաջին պայման բարեկարգութեան կը համարի: Այս կուսակցութեան կեդրոնի մարմիններէն Մուրատ և Հագգը Պէյերն որք աստ բարձր պաշտօններու կոչուած էին, վերջերս հարկադրուեցան Կ. Պոլսէն փախիլ: Պատերազմական վարժարանէն զինուորական փաշայ մը և տասն ուսանողներ ևս փախան վերջերս:

Սուլթանն իւր սենեկապետներէն ևս կասկածելով՝ զայնս պալատին մէջ իսկ բանտարկած է: Անդ բանտարկեալ են և Սուլթան Մուրատ և իւր եղբայրներն որք նախ Զրազանի պալատն էին:

Ֆռանսայի դեսպանն որ կարծես փոքր ինչ հաւատ կ'ընծայէր թուրք կառավարութեան առարկութեանց, իբր թէ Հայք գրգռիչի դեր կը կատարեն, իւր հիւպատոսներէն ընդունած վերջին նամակներուն վրայ իրազեկ եղած է ճշմարտութեանց և մեծ յուզմամբ հեռագրած է ճշմարտութիւնն:

Տիգրանակերտէ եկած նամակէ մը կը քաղեմ հետեւեալ տեղեկութիւններն:— Շրջակայ քանի մը քիւրդ ցեղեր կուգան քաղաքին վրայ, քաղաքացիք իսլամ թէ քրիստոնեայ դռներն կը փակեն: Քրդերն յուսահատ կը դառնան և քանի մ'օրէն աւելի մեծ բազմութեամբ կը հասնին, և քաղաքին առջեւ կը բանակին: Կառավարիչն կը հրամայէ դռներն բանալ, ժողովուրդն կը հակառակի, վերջապէս համադուելով կառավարչի խօսքերէն դռներն կը բանան. քրդերն հանդարտօրէն կը ցրուին քաղաքին մէջ. յաջորդ օրն ամենն կ'երթան մզկիթներ և անդ Աստուծոյ օգնութիւնն կը հայցեն կեանքներն ջարդելու համար: Մզկիթէն ելնելուն՝ կը յարձակին քրիստոնէից վրայ, կը ջարդեն 2500 հոգի, կը կողոպտեն շուկաներն և հրդեհի կուտան տներն: Յաջորդ օրն քրիստոնեայք յուսահատական ցոյց մը կ'ընեն և միաբանեալ կը յարձակին իսլամներու վրայ և կը կոտորեն շուրջ 1600 հոգի: Այս վրէժխնդրական ջարդն աւելի առաջ պիտի երթար եթէ զինուորութիւնըն առաջըն չառնուր: Քրդերն հեռացած և խաղաղութիւն հաստատուած էր, քաղաքացիք իսլամ թէ քրիստոնեայ խորհելով թէ այս չարեաց միակ պատճառն կուսակալն էր, կը վռնտեն զայն և մի խառն ժողովով կը սկսին կառավարել քաղաքն:

Յետոյ կը տեղեկանան թէ իրօք քրդերն հրաւիրողն կուսակալն եղած է: Սակայն կարելի է խեղճերն չգիտեն ցարդ թէ՛ կուսակալն բարձրագոյն հրամանի մը հրնազանդած է ... կուրօրէն, թէ բուն ոճրագործն Սուլթանն է:

Սերաստիայէն եկած նամակէ մը կը տեղեկանամք թէ, ջարդն սկսած է Հոկտ. 31 (հ. տ.) կէս օրի մօտ և յանկարծ: Հայերն խանութներն բաց թողլով տուն վազել փորձած են, յորոց շատեր ճամբան զարնուած են: Ջարդն և խանութներու աւարառութիւնն բարունակուած է մինչ երեկոյեան ժամ 12 (ը. թ.), ապա սկսած են փակ խանութներն բանալ և ապրանքներն կրել: Բոլոր քրիստոնէից խանութներն պարպուած են, նոյն իսկ աղի վաճառականաց աղն պայուսակներով կրած են: Այս նամակն գրուած է ջարդի 3րդ օրն և դեռ քրիստոնէից ողջեր իրենց պատանաւարաններէն դուրս ելնել չեն յանգձնիր: Նամակագիրն զոհերու թիւն 1500 կ'ենթադրէ և սոքն անխուսափելի կը համարի, և կը յաւելու թէ գիւղերու վիճակն աւելի դառն է զի բնակարաններն ջնջուած և ամեն ինչ աւարի առնուած է:

Կ. Պոլիս, 9 Դեկտ. 1895

Ըստ կայսերական հրամանի ջարդերն կը շարունակուին:

Վանայ քաղաքն դեռ բան մը պատահած չէ, սակայն սոքն յառաջ կ'երթայ: Արդեօք վերջի կը պահեն այդ բազմահայ քաղաքի կոտորածն, թէ կայ մի այլ ծածուկ քաղաքականութիւն, և կամ՝ որպէս ենթադրեն ոմանք, Վանայ կուսակալն չկամի հնազանդիլ կայսերական անգութ հրամանաց: Յաւ ի սիրտ իմացանք թէ՛ Սուլթանն որոշած է նաղիմի թարգմանն Սասունի զէպքի մասին իւր խաղացած վատ դերովն հանրածանօթ Ապտ իւլ-Քեամին՝ յղել վանի կուսակալին իբր խորհրդական, կարելի է նորա միջոցաւ կատարել պիտի տայ կուսակալի ձեռօք չյաջող գուցած ջարդն:

Ըստ Սերաստիայէ հասած լուրերով ժամ (ը. թ.) 6էն մինչ 10 միայն խուժանն կատարեր է ջարդն ու կողոպուտն, տասնին ստիկանութիւնն ու զինուորութիւնն ալ մաքնակցած է: Ջարդն կանխաւ գու-

չակուած և հաղորդուած է կառավարութեան, սակայն նա ջարդի անկարելիութիւն ցոյց տալով ապահովութիւն ներշնչած է: Մարդոց կորստեան թիւն շուրջ 2,000 է: Բարբարոսը չգոհանալով տանիլ խանութներու բոլոր ապրանքներն և տուներու կարասիներն, բնակարանաց դռներն իսկ տարած են ըսելով թէ կրնան ծառայել ձմռան վառելափայտ: 20—30,000 ոսկւոյ տէր անձինք ախոռներու մէջ կը բնակին: Սովն ոկսած է: Երբեմն թրքեր պաշտպանած են դրացի Հայերն: Դրամաման կորուստն մէկ միլիոն ոսկւոյ կը հասնի:

Մինչև ցարդ ջարդուած Հայերու թիւն հարիւր հազարի կը մօտենայ, իսկ ապատապար՝ լեռներն ու անտառներն ապաստանողաց և կամ քաղաքաց մէջ բացօդեայ մնացողներու գումարն կէս միլիոն է: Միայն իւարբերդի դաշտին մէջ հարիւր հազար խեղճեր կան: Կէս միլիոն ժողովուրդ խոտերով կը սնանի, ձմեռուան գալուստն զայնս այդ սնունդէն ալ պիտի զրկէ ի մօտոյ, և հաւանականաբար սովն սուրէն աւելի կոտորած պիտի ընէ. ցուրտըն արդէն սկսած է ջարդել: Ամեն կողմանէ օգնութիւն կը հայցեն, ոչ դրամ կայ և ոչ դրամ կամ սնունդ հասցնելու միջոց: Հրաւէր կարդացէք հայ թէ օտարազգի մարդասիրաց օգնութեան հասնիլ: Մինչև ցարդ Հայոց դրամական կորուստն 50 միլիոն ոսկին կ'անցնի:

Երբեմն տեղեր, նամանաւանդ դիւղօրէից մէջ, Հայք կոտորածէ զերծ մնալու համար իսլամութիւն ընդունած են: Ստիպած են քահանայներն ընդունիլ իսլամութիւն և նոյնն ընելու համոզել իրենց ժողովուրդ: Կեսարիոյ կարմիր գիւղն, Թոգաթի մի թաղն և շրջակայ քանի մը գիւղերը ամբողջութեամբ ուրացած են իրենց հաւատք:

Կ'ըսուի թէ Համիտիյէ զօրագնդեր յարձակեր են Պարսկաստանի Սահմանագլխի մի քանի հոյ գիւղերու վրայ և յետոյ մղուեր են կորուստներ տալով:

Զէյթուն դեռ կը դիմադրէ, Թուրքերըն երկնչելով Հայերու Մարաշի վրայ տիրելէն մոխիր դարձուցած են զայն: Պահրի փաշա Զէյթունի վրայ զրկուած է զայն բնաջինջ ընելու հրամանաւ:

Կ. Պոլսոյ հայ հասարակութեան մէջ սարսափն տիրած է, Թրքաց դրացի Հայ

թաղերու կարող բնակիչք Բերայ կը կոչեն: Կ'ըսուի թէ կառավարութեան կողմանէ հրահանգ արուած է Թրքաց, Հայոց վրայ յարձակիլ զրահաւորաց մտած տանն, գայս գիտնալով եւրոպացիք չեն ուզեր բռնի ներս մտնել:

Թրքաց կողմանէ երբեմն սպառնալիքներ կը պատահին Հայոց դէմ: Անցեալ կիրակէ գինով թուրք մը սուսերամերկ կը շրջէր Գասի գիւղի փողոցներն «Հայ կեալուր պիտի ջարդեմ» պոռալով, յարձակեցաւ կառքով զնացող հայ կանանց վրայ: Իսկիւ տարի և Գասըմ-փաշայի հայ թաղերու մէջ այս կարգի դէպքեր միշտ կը պատահին:

Ձերբակալութիւններ կը շարունակուին: Ոստիկանութիւնն շատ մը խեղճ գաւառացիներ ձերբակալելով իրենց հայրենիքն կ'աքսորէ, անշուշտ զայնս ի ճանապարհին սպաննել տալու համար:

Կառավարութիւնն բռնի շնորհակալութեան ուղերձներ ստորագրել կուտայ գաւառաց Հայերուն: Վերջերս նոյնն փորձեց ընել Կ. Պոլսոյ Թօփ-Գափու թաղին մէջ:

Կառավարութիւնն ամեն միջոց կը գործածէ պատրիարքի կողմանէ ժողովրդեան ուղղեալ խաղաղութեան կոնդակ մը գրել տալու համար: Պատրիարքը Հայրն տեսնալով լարուած թակարդն, մէջն իյնալէ կը զգուշանայ:

Նազիմ անդադար կ'աշխատի տղգին մէջ երկպառակութիւն ձգելու և Պատրիարքի դէմ կուսակցութիւն մը յարուցանել: Դեռ յաջողած չէ և չեմ կարծեր որ յաջողի:

Կառավարական գանձն բոլորովին դատարկ է: Այլ ևս Հարկավճար Հայերն ալ չկան գանձին դրամ հասցնելու համար. ուստի և հարկ էր նոր հնարքներ մտածել: Այս կարգի խնդրոց մէջ Թուրքն միշտ յաջող է: Չգիտենք ինչ խոստումներով յաջողած է Գերմանիայէն 2 միլիոն ոսկւոյ փոխառութիւն մը կնքել: Միլիոն մը ոսկի ալ ծխախոտի Ռէժին պիտի տայ, պայմանաւ որ կառավարութիւնն ընդունի իւր այն առաջարկներն՝ զորս ցարդ դրժած էր. որպէս, ծխախոտներու իւր ուզած գնով գնումն, չհաւանած ծխախոտի ոչնչացումն ևն: Թղթադրամ հանելու խնդիր մ'ալ կայ, եթէ վճռուի այլ ևս բոլորովին կը մեռնի երկրի առեւտուորն:

Վերջերս Բըթի Ժուռնալի տրուած 20 Հազար ոսկւոյ գումարէն զատ, այս օրերս Թանկագին նուէրներ ղրկուած է: Փարիզու այլ Թերթերն ալ ունեցած են իրենց բաժիններն:

Անշուշտ Հեռագրեր ամենուրեք Հաղորդեցին Սաիտի (փոքրին) իւր զաւկի Հետ Անգլիոյ դեսպանատունըս ապաստանիլըն: Ըստ ոմանց դեռ անդ է, ըստ այլոց երկու օր առաջ Լոնտոնի ճամբան ձեռք առած է: Աւասիկ շարժառիթն: Սուլթանն առաջարկած է Սաիտին իրեն յանձնել ինչ ինչ կարեւոր Թղթեր (Հաւանականաբար ջարդերու մասին իւր Հըրամանագրերն): Սաիտ կ'ուրանայ այդ Թղթերու իւր քով գտնուիլն, Սուլթանն զայնս ձեռք անցնելու Համար կ'առաջարկէ Լինիլ իւր խորհրդականն և Երլազի Զիթլի Գէօզի մէջ բնակիլ: Սաիտ իւր տկարութիւնն պատճառ բռնելով չընդունիր, Սուլթանն կ'անարգէ զայն: Սաիտ սարսափով տուն կը Հասնի: Յաջորդ օրն Սուլթանն իւր Թիկնապահներէ միոյն միջոցաւ լուր կ'ընէ որ քովն երթայ, Թէ զինքն տիբետաթէօս պիտի ընէ. Սաիտ Հաւանութիւն ցոյց կուտայ, և առաւօտուն երթալ կը խոստանայ: Նոյն գիշերն իսկ իւր զաւկի Հետ, Անգլիոյ դեսպանատունն կ'ապաստանի: Սուլթանին կողմանէ Թէվֆիք և Սաիտ (մեծն) փաշաներն և Սուլթանի քարտուղարն Թահսին Պէյ զատ զատ գան Համոզել Սաիտն որ Թողու օտար յարկն, Թէ Սուլթանն իւր խորհրդոց պէտք ունի, ևն. Սաիտ չճաճիր. Արթին Փաշայ կը ղրկուի, Սաիտ զայն չընդունիր: Սաիտ ըսած է դեսպանին Թէ՝ «Իմ անունով խղճի դէմ բաներ ընել կ'ուզէ Սուլթանն:»

Կ. Պոլիս, Դեկտ. 16, 1895

Օսման և Տէվրիշ փաշաներն Սուլթանին ինչ ինչ դիտողութիւններ ընելուն Համար նորա աչքէն ընկած են: Ըստ ոմանց պալատին մէջ իսկ բանտարկեալ են, ըստ այլոց արդէն խոյս տուած են ասկէ:

Սուլթանն վերջերս զՖուատ փաշա ղրկած էր ի Տարտանէլ որպէս զի քննէ անցքին պատերազմական զօրութեան աստիճանն: Ֆուատ վերադարձին կ'ըսէ Թէ

Հազիւ երկու ժամ կրնայ դիմադրել մըտնել ուզող զրահաւորներուն: Սուլթանն բարկանալով զրպանէն ատրճանակ մի կը Հանէ. Ֆուատ կուրծքն կը բանայ ըսելով՝ զարկ եթէ կամիս...: Սուլթանն կը բաւականանայ զայն վռնտելով: Վերջը կը կանչէ սիրաւ կ'առնէ և յաջորդ օրն Դեկտեմբեր 10ին վեց մեծ Տէրութեանց Ավիջօներու ներս մտնելու Հրամանագիրն կը Հանէ:

Սուլթանն վախուն այս վերջերս մի քանի ուրբաթ օրերն ինքն չերթար ուրբաթի օրինական ազօթքն ընելու այլ իւր ազօթարարն (սէտճատէճի պաշի) կը ղըրկը, շատ քիչեր գիտեն այս ճշմարտութիւնն: Անհնար է արդէն դոց և սրնթաց կառքի մէջ գտնուողն տեսնել:

Վերջերս Կալաթիոյ Արապ Ճամիսիի կողմն Թուրք ազատականաց կողմանէ տըպեալ յայտարարութիւններ ցրուած է, որով ժողովուրդն կը գրգռէին ընդդէմ Սուլթանի անձին:

ՄՈՎ

ՆԱԽԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՒԱՌՆԵՐԷՆ

Հայաբնակ գաւառոց զանազան կողմերէն բազմաթիւ նամակներ Հասած են խմբագրութեանս, ոմանք ուղղակի մեզ և ոմանք այլոց ուղղեալ, որք կը պատմեն վերջին սարսափներն: Անհնար է Հայքի մէջ գետեղել այնքան նամակ, ուստի մի քանի կտորներ միայն կը դնենք:

ՄԱԼԱԹԻՍԵՆ կը գրեն Թէ ջարդն անխնայ և ահաւոր եղած է, և խեղճ Հայ մանկիկներ այժմ ստիպուած են Թրքաց դռներն չրջիլ ի մոյր, քիչ անգամ յաջողելով պատառ մի չոր Հաց ձեռք ձգել:

Կիւրթիէն կը գրեն Թէ քրդային մեծ խուժանին դէմ զէնքով դէմ դրած են տառնմէկ օր, բայց ծանր կորուստ կրած են, շատ ուր մարդիկ սպաննուած են: Խանութներէն վաճառքներն օր առաջ բերած են եղեր իստուներն, կասկածելով մօ-

տալուտ փոթորիկն. բայց ամեն ինչ կողպտուած է: Հարուստներու տներն աւարի առած և այրած են, միայն չքաւորաց տներն մնացեր են, ուր այժմ հիւրընկալուած են անոնք որք հարուստ էին երկու ամիս առաջ: Թէպէտ նամակներ չեն ասեր, բայց պարագաներէն կ'երեւի թէ յարձակող խուժանէն ալ հարիւրաւորներ սպաննուած են ինքնապաշտպան Հայոց հարուածներուն տակ: Խժդժութեանց հերետեղէն զկնի ողջ մնացող այր մարդոց մէկ մասն փախած են լեռներն: Դոքա Զէյթուն գնացեր են կը կարծուի:

* *

ԱՄԱՍԻԱՅԷՆ կը գրեն զինուորական փողն հնչելու է յարձակման նշան տալու համար, և թուրքք մզկիթէն ելնելով ինկած են Հայ խանութներուն վերայ և ասեղ մի չեն թողուցեր: Հայոց դիակներ փողոցի շներուն կեր են եղեր տեղ տեղ:

* *

ՄԱՐԶՈՒԱՆԷՆ կը գրեն. — Նոյեմբեր 3ին, ուրբաթ օրն եղաւ աղետալի օրն: Զօրքն ալ միացան պաշխպօղութներուն և ո՛ր Հայու որ հանդիպեցան Մարթինիի և սուլինի հարուածներով գետին տապալելով՝ կտոր կտոր արին: Աղջկանց և մանուկներու ալ չխնայեցին: Այս աղէտը գուշակելով դէպքէն 7—8 օր առաջ Պէտէլթէնին կողմնակի երկու դռներն փակուած կը պահէինք և մեր տղոցմէ լըրտեսներ գնելով միշտ լրտեսել կուտայինք Պէտէլթէնի շուրջը և այլ տեղեր, որպէս զի երբ յարձակումն սկսի մեզ իմաց տան: Իրաւ ալ սե օրը գոյթ բերին թէ խուժանը մզկիթն է, անկէ ելնելուն պէս պիտի յարձակի, և մեք ալ փակելով խանութներն փութացինք փախչիլ տուն: Իմանալով թէ Հայք խանութներն փակելով կը փախչին, խաժամուժն կը շտապէ արարողութիւնն աւարտել և աւարն սկսիլ: մզկիթէն կը ժայթքի դուրս և վայ այն Հայերուն որոնք դեռ ճամբուն վրայ են: Նախ մեր Պէտէլթէնի վրայ յարձակելով երկաթէ դռներն խորտակեցին և ամբողջ վաճառքներն կառքերն լեցնելով տարին: Կրօնական արարողութեամբ թաղուելու

արժանացան 100 դիակներ, որոց ինը կին է: Նախ ալ կորսուածներ կան. 3—400 ալ վիրաւորեալներ:

* *

ԱԿՆԷՆ կը գրեն թէ Գրդերու խումբեր մեծ բազմութեամբ լեցուեցան Կամարակաց կոչուած արուարձանն, որ քաղաքէն 45 վայրկեան հեռու է, և հոն այրեցին 30 տուն, կողպտեցին 200 տուն, և սպառնացան քաղաքին վերայ արշաւել: Քաղաքացի երեւելի թրքերէն ոմանք աշխատեցին արգելել արշաւանքն. Հայք վճարած են 1,500 ոսկի փրկանք Գրդերուն: Նոյն միջոցին 400 զինուոր եկած են միւլիթիթէն և պաշտպանած են քաղաքն: Քուրդք ստիպուած են ցրուիլ:

ԱՅՍ ԹԵՐԻԻ

ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ԿԱՂՏՆԻՔԸ

Հինգ տարի առաջ ամեն ոք թերահաւատութեամբ ողջունեց զայս հրատարակութիւն և անոր մօտալուտ՝ մի քանի ամիսէն՝ դադարումն գուշակեց: Բանիմաց որեւոր էին գուշակողքն և մեզ բարեացակամ մտրդիկ, բայց իրենց կարեկցական յոռետեսութիւն չիրականացաւ: ՀԱՅԲ առանց երբէք ընդմիջուելու շարունակեցաւ 1891 Յունվարի 1էն ի վեր, և այսօր ալ յուսալից կը սկսի նոր շրջանն: Ի՞նչ պէս կրցաւ դիմանալ. ի դէպ է նկատել, և հետաքրքրական ալ է:

Դիտելի է թէ ՀԱՅԲ Նիւ Եորքում հրատարակուելով՝ հեռի է ազգային մեծ կեդրոններէն. իբրեւ լուր հաղորդող գործիք չէր կրնար առաջնակարգ կարեւորութիւն ունենալ: Հայրենիքէն եկած թղթակցութիւններն գոնէ մէկ ամիս հնացած կը լինին երբ բաժանորդաց ձեռքն հասնին, ՀԱՅԲի միջոցաւ, մանաւանդ եւրոպայի բաժանորդաց: Թարմ լուրերն յաւէտ Ամերիկայի Հայոց և Ամերիկացոց վերաբերեալներն են որք քիչ անգամ ազգային կարեւորութիւն կ'ունենան:

Հակառակ այս աննպաստ պարագային՝ ՀԱՅՔ սիրուած է և տարուէ տարի աւելի կը փնտռուի և կը կարգացուի: Ինչո՞ւ:

Պատասխանենք մէկ բառով. վասն զի լուրջ թերթ ճանչուած է ՀԱՅՔ, և լուրջ բառով կ'ուզենք ասել թէ ՀԱՅՔ կը խմբագրուի պատասխանատուութեան զգացմամբ: Դրսէն գուցէ ամեն ընթերցող գիտակից չէ այդ հանգամանքին, և կրնայ լինիլ որ ընթերցողաց մէկ մասն գոյզն կարեւորութիւն տուած լինի այս թերթին, բայց խմբագիրն ինքն միշտ և հանապազ ահագին կարեւորութիւն տուած է իւր հրատարակութեան, այսինքն այն խորին ըզգացմամբ գրած է իբր թէ իւր խօսքերն ազգին համար մահու կամ կենաց պատճառ կը լինին, — իբր թէ ազգին փրկութեան հոգն իրեն յանձնուած է, և իւր թելադրութեանց, խորհրդոց և առաջարկութիւններուն որպիսութենէն մեծապէս կախումն ունի ազգային գատին յաջողութիւնն:

Գուցէ ասող լինի թէ այս շատ ամբարտաւան միտք է, և տարապայման յաւակնութիւն: Իսկ մեք կ'ասենք թէ քաղաքական-ազգային թերթի մի խմբագիրն իրաւունք ունի խմբագրելու միայն ա՛յն պայմանաւ որ այդ «ամբարտաւան յաւակնութիւն» անկեղծօրէն ունենայ և այդ խորին զգացման աիրապետութեան ներքեւ գործէ, ու կռւէ իւր բառեր և չափէ իւր բացատրութիւններ, և խորէ լուրերըն, և ընտրէ յօդուածներն:

Օրինակի համար յիշենք անցեալ Դեկտեմբեր 1ի թուով ՀԱՅՔի խմբագրական դիտուածն Ձէյթունի նկատմամբ: Կ'ասէ. ինք թէ Ձէյթուն կրնայ Թրքաց դէմ մարտնչելէ դադարիլ հետեւեալ պայմաններով. —

ՆԱԽ. Եւրոպական տէրութեանց հիւպատոսներ կամ յատուկ պատուիրակներ երթան Ձէյթուն և իրենց ներկայութեամբ հաշտութիւն գոյացնեն:

ԵՐԿՐՈՐԴ. Ձէյթունի կառավարութիւնն Ձէյթունցւոց կողմէն նշանակուած քրիստոնեայի մի յանձնուի:

ԵՐՐՈՐԴ. քաղաքին մօտ թուրք զօրք կամ թնդանօթ չմնայ:

ՉՈՐՐՈՐԴ. Ձէյթունի մէջ գոնէ երեք տէրութեանց փոխ-հիւպատոսներ մնան առ ժամանակ մի, աչքինքն մինչև արեւելեան

խնդրոյն արմատապէս լուծուին:

Ինչ հարկ կայ որ ՀԱՅՔ այսքան հեռուէն այգալիսի պայմաններ թելադրէ, միթէ Պոլսոյ մէջ խորհողներ չկ'ան, և աւելի լաւ խորհողներ: Այո՛, կան, բայց մեծապէս թերացած կը լինի իւր կոչումէն ազգային թերթի ազատ խմբագիրն եթէ այն ենթադրութեամբ չարժի թէ ամեն բան խորհող կայ արդէն և ամեն խնդրոյ լաւագոյն կերպն անշուշտ խորհողաց մըտքին կը ներկայանայ: Խմբագիրն խորհող գործիչ մ'է, և պարտաւոր է իւր բաժին կատարել այն ենթադրութեամբ թէ իւր խորհուրդներն ուշադրութեան կ'առնուին և կրնան անփոփոխ կամ եղանակաւորեալ կերպով ի գործ դրուիլ:

Այս չի նշանակեր թէ ՀԱՅՔի խորհուրդներն միշտ արդիւնաւոր կը լինին յօգուտ ազգին, կամ միշտ լաւագոյնն են: Կարելի չէ այդպէս մտածել իսկ: Միայն սո՛ւ կ'ուզեմք պարզօրէն թէ ազգին լուրջ մասն յարգ և կարեւորութիւն կ'ընծայէ ՀԱՅՔի անոր համար որ ՀԱՅՔ ինքզինք կը յարգէ և ինքն իրեն կարեւորութիւն կուտայ պատասխանատուութեան խորին զգացմամբ:

Այս բան նշմարող ազգայիններ կդան օրք Բարիկէն, Կ. Պոլսէն, նոյն իսկ հեռաւոր Ճավայէն, նիւթապէս օգնել փութացին այս թերթի հրատարակութեան: Շատ շնորհակալ եմք ամենէն ալ, և կը յուսանք թէ այնպիսեաց թիւն աւելնալով՝ կարելի կը լինի նուազ նեղութեամբ չափուակել այս գործը:

Որովհետեւ նեղութեան մասին յաճախ խօսած եմք անցեալ տարիներ, միայն երկու սուղով վերջացունենք այդ մասն: ՀԱՅՔի խմբագիրն իբրեւ բժիշկ ունենալով հանդերձ եկամուտի աղբիւր, կրցած չէ ցարդ թերթին ծախքերն փակել և ՀԱՅՔ կը մնայ պարտաւոր: Չենք ուզեր ազգին վերայ բեռ անել, բայց լաւ է ծանուցանել թէ շատ չարչարանքով և մտատանջութեամբ կը շարունակենք այս հրատարակութիւն զի բաժանորդաց թիւն հերիք չէ և ոչ բաւական նուիրատուներ կան:

Ուրեմն մէկ անգամ ասենք, և թող բաւական համարուի — հաճեցէք բաժնեգներն չուտ յղել. — հաճեցէք նուիրատուութեան չափն ու թիւն աւելցունել եթէ կ'ուզէք որ ՀԱՅՔ ապրի և խմբագրի ընդ դիմանայ:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շնորհակալութեամբ ստացած եմք հետեւեալ նոր հրատարակութիւններն :

Կենսագրական Ակնարկ Գեր. Արսէն Արքեպիսկոպոսի ԱՅՏԸՆԵԱՆ, ընդհանրական Աբբայի Մխիթարեանց Վիէնայ Կենաց և գործունէութեան : Գրեց Հ. Գաբրիէլ Վ. Մէնէվիչեան, Մխ. Ուխտէն : Վիէնա, Մխ. Տպարան 1895. Կը բաղկանայ 64 երեսէ և կը պարունակէ մեծ քերականին չորս պատկերներն նորա կենաց ալ և ալ Հասակներն ներկայացունող : Գին մէկ Փրանք :

Պատկեր Գեր. Հ. Այտընեանի, յիսնամայ յոբելեանին առթիւ հրատարակեալ : Գին մէկ Փրանք :

ԾԱԳՈՒՄՆ ՀԱՅ ՏԱՌԻՑ. Գրեց Տոբթ. Ն. Տաղաւարեան, տպ. ի Վիէնա, Մխ. Տըպարան, 1895 : Կը բաղկանայ 40 երեսէ : Նախ կուտայ Մեսրոպայ Կենսագրութիւնն և ապա կը մխի ի լուսարանել Հայ տառից յօրինման և կատարեւագործման ազատ պատմութիւնն : Կեդրոնատեղին է Վիէնայի Մխ. վանքն : Գին երկու Փրանք :

ԶԵՅԹՈՒՆԻ

ՄԱՍԻՆ ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐԵՐ

Ուշինկթընի Թուրք դեսպանութեան հաղորդուած են Դունէն հետեւեալ պաշտօնական լուրերն, ստերով լեցուն, — «Չորապետ Մուսթաֆա Ռէմզի փաշա Դեկտ. 17ին հեռագրած է .

Պատուիրակներն, որք Մարաշէն առաքուեր էին խրատ տալու Զէյթունի ապստամբաց, վերադարձան այսօր ինծի պատմելու թէ ապստամբ չպիտի անձնատուր լինին, և թէ նոքա սպաննած են, երեք օր առաջ, բոլոր զինուորականներն որք կալանաւոր էին անդ, ի բաց առեալ զգնդապետն, զփոխ հազարապետն և զգաւապետին զայմագամին : Գնդապետ Ա-

լի Պէկ, Մխալում հաւաքուած ապստամբներն ետ մղելէ յետոյ, Զէյթունէն մէկ ժամ հեռու, դիրք մ'առաւ հանդէպ այն կետին զոր մեք գրաւած ենք Զէյթունի դիմաց : Վաղն Զէյթուն քաղաքն պիտի չըջապատուի ամեն կողմէ : Ապստամբք ամիսէ մ'ի վեր ամեն տեսակ չարադործութիւն արեր են : Նոքա մի սիւլման գիւղեր այրեցին ու կողոպտեցին, և օր ըստ օրէ կը յաճախեն իրենց արիւնքուշտ արարքներն այնպէս որ յայտնի է թէ իրենց եղեռնական վատրանջման մէջ յամառեալ պիտի մնան ցվերջ : Դեկտ. 21ին ալ Դուռն հեռագրեց թէ Զէյթունցիք 266 միւսիւման քարդեր են, 16ն կին լինելով :

Դեկտ. 26ին հեռագիրներ հասան հետեւեալ իմաստիւ —

Լոնտոն. — Զէյթուն, որ Հայ ապստամբած ձեռքն էր, ինկած է Թուրք զնդերու յարձակմանց առջեւ և ապստամբաց չատերն որք զվայրն կը բռնէին ընդդէմ Սուլթանին զօրութեանց՝ փախեր են ի բլուրներն : Թուրքք էին 10,000 24 թնդանօթով. Հայք 15,000 :

Կ. Պոլիս. Զէյթունի առումն ի Թուրք զօրաց պաշտօնապէս կը հաստատուի :

Այս լրոց ճշմարտութիւնն երկբայելի անող հեռագիրներ եկան ապա. — թէ Թուրք զօրքն յաջողած էին բայց յալթութենէն յետոյ վերադարձեր էին ի Մարաշ : Այլ զրոյց մի թէ Հայք եղած էին յալթական, և հարիւր Թուրք կալանաւորեր էին : Դարձեալ թէ Թուրք բանակն յառաջացած է ի Կապան, Զէյթունէն երկու օր, և բնակիչքն, իբր 2,000 ապստամբներ են ի Զէյթուն, Թողլով իրենց հօտերն ու ալ ստացուածքն : Զօրքն կ'այրեն ամեն բան : Շատ անձրեւ եկած է և ճամբաներն սղմալից են : Թուրք զօրաց ուրիշ բաժին մ'ալ Մարաշէն կը յառաջանայ դէպ ի Զէյթուն, բայց հեղեղներն դժուարացուցեր են գետակաց հուններն : Երրորդ զօրաբաժին մ'ալ Կէօքունէն կը խաղայ առաջ և պարտի դժուար կիրճէ մի անցնել զոր 100 մարդ կրնայ պաշտպանել :

Տէյլի Նիւզ Դեկտ. 31ին հրատարակեց պոլսեան հեռագիր մի որ կ'ասէ թէ Զէյթուն պաշարող Թուրք զօրքն սարսափե-

լի կերպով կը ներդրին ցրտէն: Միջին հաշուով օրն 50 հոգի կը սատկի ցրտահար: Ուրիշ կողմերու զօրքերն ալ սղբալի վիճակի մէջ են: Ամիսներէ ի վեր թոշակ ստացած չունին. ցնցոտի են հագուստները, և սնունդն անբաւական: Սիւրիոյ մէջ ծառայող 60 հազար զօրքն հիւանդութենէ կը տասանորդուին: Շաաերն ալ դառալիք լինելով խոյս կուտան իրենք զիրենք աւազակութեան տալու:

Լոնտոն, Յունուար 1. Դեկտ. 16ին Ձէյթուրի Հայք պահանջեցին դռնէն որ պարէն հայթայթէ իրենց ձեռքում գտնուող թուրք բանտարկելոց համար: Դեկտ. 23ին Սուլթանն հրաման հանեց թէ կերակուրն պէտք է հայթայթուի:

Բ. Դուռն խուսափուկ պատասխան մի տուեր է օտար դիւանագիտաց որք ընծայեր էին միջնորդ լինիլ թրքաց և Հայոց միջեւ Ձէյթուրի առման համար որ Հայոց ձեռքումն է: Օտար ներկայացուցիչք նորէն ժողով արին այսօր և որոշեցին վերստին ջանալ համազել զԴուռն որ միջնորդութիւն ընդունի, և միջնորդ անուանեցին Հալէպի օտար հիւպատոսներ:

ԵՅԼ ԵՒ ԵՅԼՔ

Կարնոյ առաջնորդն Սր. Շիչմանեան կոտորածին սրտաճմլիկ նկարագիր մ'է յղեր առ Վեհ. Կաթողիկոսն Հայոց յէմիածին, որոյ օրինակն հրատարակեցաւ նիւ Եորքի Ուլըրտին մէջ Դեկտ. 20ին:

Յիշեալ եպիսկոպոսն, ըստ Դեկտ. 31ի հեռագրալոյ, ձերբակալուած է թուրք կառավարութենէն և ի Կ. Պոլիս յղուած: Ամբաստանուած է թէ կառավարութեան դէմ յուզման մէջ առաջնորդող չեւր է ունեցեր: Իւր ձերբակալումն սաստիկ զրգիւ պատճառներ է ի Կարին, և պաշտօնտօնեայք միջոց ձեռք առեր են անկարգութիւններն խափանելու համար:

Մշոյ, Ալաշկերտի և Բաղիշի զօրքերն դրօշի տակ կանչուած են:

Լոնտոն, Դեկտ. 28. Ռուսիոյ և Անգլիոյ միջեւ մտերմական հասկացողութիւն մի կատարուելու կը միտի, այնպէս որ Ռուսիա գրաւէ զՓոքր Ասիա՝ Անգլիա ծովեղբքէն գործակցելով Ռուսիոյ: Ռուսական առաջարկութիւնք աներկբայ այս նկատմամբ Լորտ Սօլզպէրիի առջեւն են: Երէկ Բեզրպուրկէն եկած լուրերն ալ նոյնին հաւատարմ կը միտեցունեն:

Միացեալ Մամլոյ ասից համեմատ Հայ եկեղեցական պատգամաւորութիւն մի ներկայացեր է ի Բեդերպուրկ Չարին պաշտպանութիւնն խնդրելու իրենց հաւածեալ կրօնակցաց համար, և Իշխան Լօպանօֆ, Արտաքին Գործոց Նախարար, ասեր է թէ Չարն, եթէ հրապարակաւ հրաւիրուէր առ նուազն յերեք պետութեանց, ի միջի որոց Անգլիա, պիտի կըրնայ խաղաղօրէն կառավարել Փոքր Ասիոյ խռովեալ դաւառներն: Արկայլի դուքսն գրած է Սօլզպէրիի որ եթէ Եւրոպայի պետութեանց համաձայնութիւնն չի կըրնար իրանալ, Մեծն Բոլտանիա պարտատաւոր է իւր նախանձախնդրութիւն թողուլ և հրաւիրել զՌուսիա անել այն զոր դիւրաւ կարող է անել:

Կ. Պոլիս, Դեկտ. 28. Տրապիզոնէն լուր կուղայ թէ 35 Հայեր դատուած են պատերազմական դատաստանով իբրեւ մասնակից Հոկտ. ի ժխորմանց: Վեցն դատապարտուած են մահուան, 15ն՝ շղթայակապ աշխատութեան՝ հինգ տարիէն մինչեւ ցկեանս պայմանաժամերով, իսկ մնացեալք աքսորուած են: Դատապարտելոց մէջ են քահանայ մի, փաստաբան մի, երկու վաճառականներ, ուսուցիչ մի և ատաղձագործ մի:

Արաբկերի կոտորածի ատեն 2 հազար Հայեր սպաննուած կամ վիրաւորուած են:

Ուրֆայի մէջ նորէն անկարգութիւններ տեղի ունեցեր են:

Ռըսուան, Թիւ, Սղերդ, Մարտին և Մարտինի շուրջը 10—15 աւաններ և գիւղեր ալ ջարդի և կողոպտման ենթարկուած են:

Լոնտոն, Յունուար 4. Կ. Պոլսէն կը հեռագրեն թէ սոսկալի կոտորած մ'ալ ի Պէրէճիք տեղի ունեցած է, Այնթապի մօտ:

Պաշտօնական տեղեկագիրն 900 կը դնէ սպաննուածներու թիւն:

Ուրֆայի ջարդն աւելի ահաւոր է: Փոռն կ'ընդունի թէ 900 սպաննուած են. բայց ուրիշ հաշիւներ 2 հազար կը ցուցնեն:

Սուլթանն ընծայ յղեր է Ջարին պարանոցի չքեղ մանեակ մի, քթախոտի տուփ մի և գլանիկի (սիկարէթ) տուփ մի, իւրաքանչիւրն ամենաթանկ գոհարեղէններով ընդլուզուած է:

Հարկ չկայ այս նուիրատուութեան տխուր նշանակութիւնը պարզել:

Վիեննայի թերթերէն մին Բեզերպուրկէն լուր կուտայ թէ Ռուսիա բնաւ մտադիր չէ Հայաստանի վարչութիւնն ստանձնելու: Այս առթիւ Սթանտարտ կը գիտէ թէ նոյնպէս նազ արաւ Աւստրիա ի գրաւել զՊոսնիա:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՒՄ. Թուրք թերթերուն մէջ հետեւեալ Պաշտօնական Զեկուցումը կը կարդանք.

«Վեհ. Սուլթանը իմանալով որ Քուրդ Մուսա Պէյ, որ Մէտինէ զրկուած էր հոն բնակելու համար, իր ընկերոջ՝ Քուրդ Մուսթաֆայի հետ, Մէտինէէն փախեր է, հրամայած է որ անպատճառ ձերբակալուին: Կայս. պալատին առաջին քարտուղարն ալ այդ մաքով հեռագրեր ուղղած է ամեն կողմ: Այս անգամ Պաղտատի կղզուակալութիւնը, ի պատասխանի առաջին քարտուղարի հեռագրին, ծանուցած է թէ Պաղտատի ոստիկան-գլխուորդներու հրամանա նատար էտհէմ փաշա, որ Քէրպէյի Կառավարչի փոխանորդութեան պաշտօնն կը վարէ, ձերբակալած է Մուսա Պէյը իր ընկերոջը՝ Մուսթաֆայի հետ:

ՀԱՅՐԵՆԻՔ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՔ ԵՒ ԹՈՒՐԻԱ

Բաղէշի և Խարբերդի մէջ թուրք պաշտօնեաներ կը ջանան ստորագրութիւն գրել տալ թղթերու որով Ամերիկացիք կ'ամբաստանուին իբրև մասնակից յեղափոխական շարժմանը ընդդէմ թուրք կառավարութեան:

Արտաքին գործոց քարտուղար Օլնէյի պատասխանն առ Մերակոյտն Միացեալ

Նահանգաց, կ'ասէ թէ ամերիկեան քաղաքացւոց թիւն ի Թուրքիա ճիշդ չգիտէ բայց 172 միսիոնարներ կան և նոցին կը ցորգներ ցրուեալ ընդ Փոքր Ասիա: Կան նաև Ամերիկացի եղածներ որք նախկին հրապարակներ էին Թուրքիոյ: Ասոնց և Ամերիկացի ծնեալներու իրաւունքն մի և նոյն է, և ըստ օրինաց Միացեալ Նահանգաց չէ կարելի խոր դնել երկուքին միջև, այնպէս որ մեր կառավարութեան պաշտպանողութիւնն հաւասար լիւելի չափով պէտք է ընծայուի մէկուն ինչպէս միւսին: Մեր օրէնքով, կը շարունակէ Քարտուղարն, մեր դեսպանք և հիւպատոսք որոշ իրաւասութիւն ունին ապստամբութեան և վտարանջման ամբաստանութեանց մասին երբ գործունի օտար երկրաց մէջ գտնուող Ամերիկացիներէ, ինչպէս նաև նուազ ծանր յանցանքներու մասին: Այս կառավարութիւնն իւր այս իրաւասութենէն չի կրնար ձեռնթափ լինիլ նոյն իսկ եթէ Ամերիկացի եղած անձն վերադարձած լինելով իւր նախկին հայրենիքն՝ մասնակցած լինի քաղաքական դաւադրութեանց: Հետեւապէս մեր Պոլսեան դեսպանին հրահանգ արուած է պահանջել ամենայն իրաւունք 1830ի դաշնագրին չորրորդ յօդուածին համեմատ, և առաջարկել դատել ո և է Ամերիկացի ամբաստանեալ իբրև ապստամբ, մտադրկամ մոլորեցունող, և եթէ այսպիսի առաջարկութիւն մերժուի, պահանջել ամբաստանելոյն արձակումն, թէպէտ և երկրէն դուրս հանելու պայմանաւ լինի:

Ամերիկացի օրիորդն՝ տոքթոր Քիլմ-Պոլ՝ Վանէն կը գրէ նոյ. 25 թուականաւ առ Քրիսչեըն Հէրալտ Նիւ Եորքի, թէ Վանի գաւառում 5 հարիւր հայ գիւղեր կան որոց երեք-չորրորդն յաւար առնուած են և բնակիչքն մերկ և թափառիկ կը սպասեն ձմրան: Զչդամերձ հաշուով իբր 40 հազար ընտանիք իրենց յարկերէն արտաքսուած են:

Յիշեալ օրիորդն Վանայ գաւառին Հայոց հրեշտակն է եղած, և անխոնջ ու իմաստուն ջանիւք անդադար կ'ամօքէ ժողովրդի աղէտներն, Ամերիկայէն նպաստ յղուած գումարներն գործածելով հում նիւթերէն զգեստ շինել տալու և բաշխելու, որով թէ գործաւորք կ'ապրին թէ անկար չքաւորք: Փոռ մ'ալ բացեր է ուստ հաց կը բաշխէ սովելոց:

Ուսումը չ'այսինսմ Բանձնախումբն որ սկզբնապէս հինգ հոգիէ կը բաղկանար, այս անգամ մեծցած է և քսանուհինգ անդամներ կը պարունակէ: Այս Բանձնախումբ Երևան 2ին Պետական Գործադարին յղած է հետեւեալ հռաւգիրն. —

Ուսումը քաղաքացւոց Բանձնախումբըն ինպատու Հայաստանի ներքինը՝ ջերմագինս կը խնդրէ որ կեդրոնական կառավարութիւնն շնորհէ պաշտօնական սրբագործութիւն Ամերիկեան Կարմիր Խաչի Ընկերութեան ձեռնարկին յամօքումն թշուառութեան ի Հայաստան՝ ընծայելով նորա պաշտօնէից կամ ներկայացուցչաց ինչ օգնութիւն որ կարելի է ընծայել ի ձեռն կանոնաւոր գիւանագիտական միջոցներուն:

Կ. Պոլսէն կը հռաւգրեն թէ անդ շատ կը քննադատեն Ուսումընի կառավարութիւնն որ ցարդ անկարող եղած է Վեհաժողովոյն որոշման համեմատ ամերիկեան հիւպատոսներ կարգել ի Կարին և ի Խարբերդ:

Նիւ Ինկլէնտի Ընկերութեան ճաշկերոյթին մէջ ի Պրուքլին, Դեկտ. 21ին, ատենախօս մի իւր եռանդուն խօսքերն հետեւեալ կերպով վերջացուց. — Երբ ձանթրիլօնի, Պրիւթօլի եպիսկոպոսն մահու սպառնալիք կրեց Ճէյմս Բ. է, 1688ին, իւր պարտքն կատարած լինելու համար, Բօրնուօլի մէջ աղաղակ մի բարձրացաւ, որոյ արձագանքն հազիւ մարած են.

Եւ պարտի թրիլօնի մեռնիլ,

Եւ Պարտի թրիլօնի մեռնիլ.

Յայնժամ երեսուն հազար Բօրնիլցիք

Ուզեն պիտի գիտնալ թէ ինչ պատճառաւ:

Փոխենք զայդ երգ և թող Ամերիկա կարդալ տայ զայն—

Եւ պարտի՞ն Հայք մեռնիլ, երկու միլիոն քրիստոնեայք մեռնիլ.

Յայնժամ եօթանասուն միլիոն Բրիտոնեայք այստեղ

Ուզեն պիտի գիտնալ թէ ինչ պատճառաւ:

Հասցէ

Editor of "HAIK" 202 West 23d St.,
New York.

U. S. America.

կամ Redaction de la Revue "HAIK" ևն

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան բաժնեգիրն է

ամեն երկրաց համար

երկու տալեր կամ տասն Փրանք

կանխիկ

Ա. Ռ.

ԲԵԺԱՆՈՐԴՍ "ՀԱՅՔԻ,"

Այս թերթ 1896ին ևս պիտի հրատարակուի, ամիսն երկու անգամ: Բաժանորդագրութեան պայմաններն նոյն կը մնան, այսինքն երկու տոլար, 10 Փրանք կամ 4 րուպլի ամեն երկրաց համար:

Բաժանորդագներն կրնան յղուիլ հետեւեալ կերպերով:

Ամերիկեան տոլար թղթադրամ նամակի ծոցով:

Ամերիկեան փոսթ-օթէմփ նամակի ծոցով.

Մընի Օրտըր.

Օտար երկիրներէն դրամ յղելու հետեւեալ կերպերն կան.

Մընի Օրտըր.

Քրէտի Լիօնէի փոխանակագիր.

Ֆռանսական դէմպու-րօսդ.

Նամակի ծոցով ոսկեդրամ կէս իրա, որ նուրբ լինելով անչօջափելի է: Եզրպտոսէն և Պոլսէն այս կերպով բաժանորդագներ մեզ յղուած են ապահովապէս:

Դրամ պարունակող նամակներն ապահովագրել պէտք է:

Կը խնդրենք յատկապէս որ յիշեն Հայք ուզողներն թէ բաժանորդագրութեան մեր պայմանն է կանխիկ վճարում.

Կը խնդրենք որ մընի օրտըրի կամ մանտա տը փօսթի միջոցաւ խմբագրութեան Նըս դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան: Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ:

Տիար Տ. Շուշան հաճած է յանձն առնուլ «Հայքի» գործակալութիւնն յԱւստրալիա: Բաժանորդք կրնան նմա վճարել գիրն:

ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒԻ «ՀԱՅՔ»

Արարատ Գ. Խ. Կ. Բ. Պ. Մ. Բ. Ս. Օ. Տ. 110
դահեկան, Յորդանան 50 դ., Ադամանդ
20., Մասիս 20., Բարեխօսողն 20., Խաչ
20., Բախող 15: Որ հաւասար եղաւ 10 տո-
լար 38 սէնթի:

ՀԱՅՐԵՆԻՔ

ՕՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կը հրատարակուի տարին 300 թիւ: Օ-
տար երկրաց համար տարեկան բաժանոր-
դագինն է 25 Փրանք կամ 5 տոլար:
Հասցէն է—

Journal Le HAIRENIK,
Galata, Constantinople, Turquie

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ

Հանդէս կիսամսեայ

25րդ տարի

Տարեկան բաժանորդագինն է, օտար երկ-
րաց համար 17 Փրանք կամ 3 տոլար 40
սէնթ: Հասցէն է—

M. M. MAMOURIAN,
Smyrne, TURQUIE

Լ'ԱՌՄԷՆԻ-ԱՐՄԷՆԻՍ

Ամսօրեայ

Տարեկան բաժանորդագինն է 3 տոլար 75
սէնթ: Հասցէն է—

33 De vere Gardens W, LONDON, ENG.

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

Տարեկան բաժանորդագինն է 10 Փրանք,
(երկու տոլար): Հասցէն է—

Redaction du HANTES,
Couvent Mechitarist.,
VIENNE, AUTRICHE

ԲԱԶՄԱՎԷՊ

Ամսօրեայ

Տարեկան բաժանորդագինն է 10 Փրանք,
(երկու տոլար): Հասցէն է—

Redaction du BASMAVEP
St. Lazare, Venis, ITALIE

ՄՇԱԿ

Օրագիր

Տարեկան բաժանորդագինն է 10 րուբլի,
Ամերիկայի համար 6 տոլար: Հասցէն է—
Eflis, Redaction du MSCHAK

ԺԱՄԵԳՈՐԾ

Պատիւ ունիմ ծանուցանել թէ ճար-
տարապետ շոգեշարժ մեքենայից լինելով,
կը զբաղիմ նաև ժամագործութեամբ ե-
րեկոյներն ժամ 8էն մինչև 11 ժամացոյց
նորոգելու:

Նաև կը գտնուին քովս ամեն կար-
գի նոր ժամացոյցներ ալ ածան գներով:
Ոչոնք որ կը փափաքին աղէկ ժամացոյ-
ցի մը տէր ըլլալ առանց որս լինելու խա-
րերայ Հրէյից և այլ ազգաց որք կրկնա-
պատիկ գինն կը պահանջեն, կրնան գի-
մեք մեր հասցէին:

MISAK M. PHILIP,
25 Monroe St. New York.

ՆԻՒ ԵՈՐՔ

ՀԷԹ ՀԵՈՒՋ

անունն է Ուստըրի Ֆրօնթ Բիոդոյին մէջ

գտնուող թիւ 14 վաճառատանն,

ուր կը վաճառուին գլխարկ, գլխանոց,

ձեռնոց, շապիկ, օձիկ, փողկապ,

ամենն ալ

ԱՄԵՆԱԺԱՆ ԳՆԵՐՈՎ

Հայ գաղթականութեան պէտքերուն
համապատասխանող խանութն է ասի
ինչպէս արդէն շատերն փորձով տեսած
են:

MORRISON & Co.

ԴԵՐՁԵԿ

106 Fulton St., New York.

Ամառուան համար ընտիր ձեռք մի
զգեստ, ձեր վերայ յատկապէս ձեռած
չափուած կը շինեմք 16 տոլարի, ինկ սո-
նազգեստ (փանթոլոն) 4 տոլարի: Ձեւին
կատարելութիւնն ու ճշդութիւնն կերպ-
շաւարներն:

FACTS

ABOUT

ARMENIA

ԻՐՈՂՈՒԹԻՒՆՔ ՎԵՐԱԲԵՐՈՒԹԵԱՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

Այս է տնունն անգլիերէն տետրակին որ Հ. Հ. Դաշնակցութեան կողմէն հրատարակուեցաւ :

Տեւորակն կը պարունակէ կլատսթոնի մեծ ճառն խօսեցեալ ի Ձէսթըր, և Տիլօնի յօդուածն՝ Քօնթէմփորէրի Րիվիւէն արտատպուած : Այս յօդուած մինչև ցարդ Հայոց վերայ գրուածներուն ամենագորաւորն և ամենակատարեալն է, զոր կարգացող օտարական մի, որքան ալ գուլ խղճի տէր լինի կը կատղի թուրք էառավարութեան դէմ : Հայրենակիցք պէտք է փութան տարածել այս տետրակ օտարականաց մէջ :

Գին օրինակին է 20 սէնթ : Առ նուազն 50 օրինակ մէկէն գնողին կը արուի 15 սէնթէն :

Դիմել ՀԱՅՔԻ ԽՈՐԱԴՐԱՄԱՆՆԵՆ :

BUSH & Co.

Պ Ո Ւ Շ Ե Ի Ը Ն Կ .

(Հաստատեալ ի 1849)

65 Front St., Worcester, Mass.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

E. A. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7րդ Էվինիու Նիւ Լորք

26րդ և 27րդ Փողոցներուն միջև

Դեղագրեր կը շինուին խնամով

ՈՒՍՏՐԻ ՀԻՆԳ ՍԷՆԹ

ԽՆԱՅԵԼՈՒ ՊԱՆՔԱՆ

Այս պանքան հիմնուած է 1854ին . կ'ընդունի մինչև անգամ հինգ սէնթ : Ժամերն են կէս օրէն առաջ 9էն մինչեւ կէս օրէն վերջ 4 : Շաբաթ օրերն 9էն մինչև 1 :

Հասցէն է 314 Մէյն փողոց :

ԵՐԿԼՍԻՐՈՒԹԻՒՆՔ

Մ. Ս. ԳԱՅՐԻԷԼԵԱՆԻ

(Այս գրքերն գնելու համար գրել կամ գիմել Հայքի ԽՈՐԱԴՐԱՄԱՆՆԵՆ :)

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆ ԲԱՐՈՒՄԵՆ

ԵՆՅԵԱԼՆ ՈՒ ԵՂԱԳՐԵՆ

Հայ բողոքական եկեղեցւոյ մի անջատ կազմաւորման առաջնորդող սխալ քայլերըն պատմաբանելէ յետոյ՝ հեղինակն կը ցուցնէ թէ այդ եկեղեցական կազմակերպութիւն բոլորովին զուրկ լինելով Հայ ազգային հանգամանքէ՝ չի յաջողիր մեր մէջ, և կ'առաջարկէ որ Հայ բողոքականք թողուն այդ օտար դրութիւնն և բուն ազգային կամ մայրենի եկեղեցւոյն բարեկարգեալ այնպիսի մէկ դրութիւնն որ դեգրեն որ կարենայ իրրեւ մաքրուած և ազգային եկեղեցւոյ արպար նկատուիլ ազգին լուսամիտ մասէն :

Գինն է 1 Փրանք (20 սէնթ) 61 երես : 1888

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԱՆԵՆՔ

Հայ ցեղին Հոգեբանութեան վերայ անդրանիկ երկասիրութիւն մ'է այս ուր պարզուած են Հայոց ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԻՈՅՆ բարեմասնութիւնք և ազնիւ միտումներն, և ցուցուած է Հայաստանի բնագրական ազդեցութեանց դերն Հայկական բնաւորութիւնն կազմելու մէջ : Այդ իմաստասիրութենէ կը բխին չորս եզրակացութիւններ ազգային իտէականի և դաստիարակութեան վերաբերութեամբ, որք կարճ ի կարճոյ նշանակուած են :

Գինն է 50 սանթիմ (10 սէնթ) 31 երես : 1894

ԱՅԵՆԵՐՕՍՈՒՐԻՐԵՆՔ

Այս տետրակ Հաւաքածոյ մ'է հեղինակին ազգային ատենախօսութեանց եօթին, որք են ՁԵՅԹՈՒՆ, ՍՈՒՐ, ՀՆԱՊ Է, ԴՐԱՆ ԳԱՂՏՆԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ, ՉԱՐԿ, ՆԵՐՔԻՆ ՎՏԱՆԳԻ, ՅԱՂՈՒԹԻՒՆ ՕՐԷՆՔԻ ՈՒԺՈՎ : Գինն է 1 Փրանք (20 սէնթ) 71 երես : 1893

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Մ. Ս. ԳԱՅՐԻԷԼԵԱՆԻ